ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2020 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել՝

- Հայաստանի ԱՃԹՆ-ի երրորդ՝ 2019թ. ազգային զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման խորհրդատվական ծառայությունների գնման գործընթացում հաղթած Գրանթ Թորնթոն ՓԲԸ խորհրդատվական ընկերության հետ համապատասխան պայմանագրի կնքումը, ընկերության պատասխանատուների հետ զեկույցի և նախնական ուսումնասիրության առանձնահատկությունների պարզաբանումը, զեկույցի մեկնարկային հաշվետվության նախագծի քննարկումն ու ԲՇԽ-ի կողմից դրա ընդունումը,
- իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման աշխատանքներն իրականացնող VXSoft ընկերության կողմից ավարտին հասցրած ԻՍ հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային հարթակի ներկայացում-ուսուցումը՝ ընդերքօգտագործող ընկերությունների, լիազոր պետական մարմինների ներկայացուցիչների, Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ–ի անդամների և քարտուղարության աշխատակիցների համար, հարթակի աշխատանքային փորձարկումը, տեխնիկական և բովանդակային անհամապատասխանությունների հայտնաբերումը, կատարող ընկերությանը՝ դրանց վերացման անհրաժեշտության մատնանշումը,
- Հայաստանի ԱՃԹՆ-Ի առաջին և երկրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագծի կազմումը,
- Համաշխարհային բանկի հետ բանակցությունները ընթացիկ դրամաշնորհային ծրագրի փակման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ՝ ապահովելու համար COVID-19 համավարակի և պատերազմական գործողությունների հետևանքով դանդաղած

աշխատանքների, այդ թվում, ԱՃԹՆ-Ի 3-րդ զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման պատշաճ իրականացումը:

Աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումները նույնպես հիմնականում իրականացվել են աշխատանքային ռեժիմով՝ առանց խոչընդոտների:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-ի 2020Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	**Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 1. **ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. **Կայքի ընթացիկ սպասարկում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ Ընթացիկ	Ընթացիկ	ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. **ԱՃԹՆ կայքի**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

համալրում արդիական տեղեկատվությամբ	*Արդյունքները՝* Կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրությունների, իրավական ակտեր, նորություններ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. **Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ-ի զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. **Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով** (YouTube, Twitter, facebook **և այլ ցանցեր**)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. **Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հանդիպումներ (այդ թվում՝ մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն խմբակցությունների հետ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Չի կատարվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ՀՀ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ապերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. **«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի	Ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու	

իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում	համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ) *Վերջնաժամկետը՝* 2020թ.		հանքարդյունաբերության կենտրոն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 13. **Իրական սեփականատերերի ռեգիստրի և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման միջոցառում**	*Մամուլի ասուլիս* *Վերջնաժամկետը՝* 2020թ.	Չի կատարվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	ԻՍ հայտարարագրման էլեկտրոնային համակարգը հանրությանը կներկայացվի 2021 թվականին, հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող ընկերությունների կողմից 2021թ. տարեկան հայտարարագրերի առցանց ներկայացումից հետո:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում
Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն կնքված պայմանագրի, շարունակվել է «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից ԱՃԹՆ-ի կայքի և առցանց հաշվետվությունների հարթակի ընթացիկ սպասարկումը: Անհրաժեշտության դեպքում, լուծվել են բացահայտված ծրագրային խնդիրները:

Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ

Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում թարմացվել է էջերի բովանդակությունը, հանրային հասանելիության համար բաց տվյալների կանոններով հրապարակվել են ԱՃԹՆ-ի վերաբերյալ իրավական ակտերը, փաստաթղթերը, տեղեկություններն ու նորությունները: Կայքի օտարալեզու օգտվողների համար հրապարակվող տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)

Կայքում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ընթացիկ գործունեությունը լուսաբանող 3 նորություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով[1]: ԲՇԽ-ի կողմից հաստատվել և հրապարակվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման 2019թ. տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի ներդրման կատարողականը ներկայացնող 2019թ. 4-րդ եռամսյակի, 2020թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների առաջընթացի հաշվետվությունները[2]: Հրապարակվել է նաև 2020 թվականի օգոստոսին վերանայված և ԲՇԽ-ի կողմից հաստատված աշխատանքային ծրագիրը[3]:
Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանի՝ Հայաստանում գործող Մեդիամաքս լրատվական գործակալությանը տրամադրված հարցազրույցի միջոցով հանրային լայն լսարանի համար լուսաբանվել են իրական սեփականատերերի բացահայտման հարթակի ստեղծման անհրաժեշտությունը, դրա գործառույթները, հարթակի գործարկման արդյունքում լուծվող խնդիրները, հարթակից օգտվելու ձևը, շահառուները և այլն[4]:
Շարունակաբար թարմացվել են Facebook[5], YouTube[6] և Twitter[7] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը:

Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում

COVID-19 համավարակով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային հանդիպումներ չեն իրականացվել: Շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունն իրականացվել է հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով:

Միջոցառում 13. Իրական սեփականատերերի ռեգիստրի և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման միջոցառում

[1] https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80
[2] https://bit.ly/3aMCJx6
[3] https://bit.ly/3sqCptN
[4] https://mediamax.am/am/news/digitization/41415/
[5] https://www.facebook.com/EITIArmenia/
[6] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[7] https://twitter.com/EITI_Armenia

Միջոցառումը նախատեսվում է իրականացնել ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի գործարկումից հետո՝ 2021թ. առաջին եռամսյակում:

ՆՊԱՏԱԿԸ	Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիսրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 18. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հանրային ռեգիստր *Վերջնաժամկետը*՝ Առաջին-չորրորդ եռամսյակներ	Կատարվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 19. **Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Ուսուցում *Վերջնաժամկետը*՝ Չորրորդ եռամսյակ	Կատարվել է	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. **Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հայտարարագրեր *Վերջնաժամկետը*՝ Չորրորդ եռամսյակ	Կատարվել է	Ընկերություններ, իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 21. **Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում,**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ քննարկումներ, կարծիքներ, վերլուծություն, իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը*՝ Չորրորդ եռամսյակ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան պետական մարմիններ, Իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքային խումբ	

իրավական ակտերի նախագծում				
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				

Միջոցառում 18. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծման համար կազմակերպության ընտրություն և հանրային ռեգիստրի ստեղծում

Միջոցառում 19. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ ուսուցում

Իրական սեփականատերերի (ԻՍ) բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման աշխատանքներն իրականացնելու համար ընտրված VXSoft ընկերությունը 2020թ. դեկտեմբեր ամսին ավարտին հասցրեց ԻՍ հայտարարագրերի էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները: 2020թ. դեկտեմբերի սկզբին կայացավ իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի երկօրյա հեռահար ներկայացում-ուսուցումը, որին մասնակցեցին ընդերքօգտագործող ընկերությունների, լիազոր պետական մարմինների ներկայացուցիչները, Հայաստանի ԱՃԹՆ-ի ԲՇԽ–ի անդամներ, ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության աշխատակիցները: Դեկտեմբերի 3-ին, միջոցառման առաջին օրը, ԻՍ բացահայտման հանրային ռեգիստրի էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովումը մշակած VXSoft ընկերության մասնագետները ներկայացրեցին հարթակի աշխատանքի սկզբունքները, դրանում ընկերությունների կողմից ԻՍ հայտարարագրերի առցանց ներկայացման ընթացակարգը, պարզաբանեցին հայտարարագրի տվյալները մուտքագրելու տեխնիկական առանձնահատկությունները, պատասխանեցին մասնակիցների հարցերին: Ներկայացման ավարտին մասնակիցներին առաջարկվեց առաջիկա օրվա ընթացքում կատարել էլեկտրոնային հարթակի թեսթավորում, գնահատել դրա աշխատանքը և արձանագրել խնդիրներն ու առաջարկությունները: Դեկտեմբերի 7-ին, ուսուցման երկրորդ օրը մասնակիցները ներկայացրեցին իրենց կարծիքներն ու առաջարկությունները հարթակի աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև կայացավ քննարկում՝ ԻՍ բացահայտման իրավական կարգավորումների որոշակի հարցերի շուրջ: VXSoft ընկերության մասնագետները, ինչպես նաև ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատակիցները արձանագրեցին այն տեխնիկական հարցերի շրջանակը, որոնք պետք է շտկվեն և հավաստիացրին մասնակիցներին, որ դրանք կշտկվեն մինչև հանրային ռեգիստրի պաշտոնական գործարկումը՝ 2021թ. փետրվարը:

Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնող ընկերությունների ներկայացուցիչներին ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից տրամադրվել է հայտարարագրերի լրացման կարգի և ներկայացման ընթացակարգի վերաբերյալ շարունակական խորհրդատվություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 20. Իրական սեփականատերերի հայտարարագրերի ներկայացում ընկերությունների կողմից

Հաշվետու ժամանակահատվածում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող ընկերությունների կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հայտարարագրերի ներկայացման գործընթացը շարունակվել է: Համաձայն ՏԿԵՆ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՏԿԵՆ-ը, հիմք ընդունելով պետական ռեգիստրի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվությունը, հաշվետու ժամանակահատվածում զգուշացումներ է ուղարկել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ունեցող 2 ընկերությունների՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքի չներկայացման հիմքով:

Միջոցառում 21. Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի և իրական սեփականատերերի ներկայացման գործընթացի վերլուծություն, թույլ կողմերի վերհանում, իրավական ակտերի նախագծում

Հայաստանի Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ/OGP) 4-րդ գործողությունների ծրագրի հանձնառության կատարման շրջանակում ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնել է Պետական ռեգիստրում իրավաբանական անձանց իրական շահառուների (սեփականատերերի) բացահայտման համակարգի բարեփոխման վերաբերյալ տեղեկանքի և օրենսդրական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները՝ համագործակցելով Կենտրոնական բանկի, Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ: Ընթացիկ ժամանակահատվածում շահագրգիռ կողմերը Արդարադատության նախարարությանն են ներկայացրել հրապարակված իրավական ակտերի փաթեթի վերաբերյալ առաջարկություններ և նկատառումներ:
Իրական սեփականատերերի հանրային ռեգիստրի թեսթավորման ընթացքում, ինչպես նաև OpenOwnership ընկերության հետ համագործակցության շրջանակում վեր են հանվել ԻՍ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի թույլ կողմերը և խնդիրները, որոնք շտկվել են ռեգիստրը ստեղծող ընկերության կողմից:

ՆՊԱՏԱԿԸ	**Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 24.2 **ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում (համակարգված**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Համապատասխան աշխատանքային խմբի կազմավորում, քննարկումներ,	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարություն,	

բացահայտումներ, կարողությունների հզորացում, հրապարակվող պայմանագրերի շրջանակի ընդլայնում, ԱՃԹՆ-ի իրականացմանը հաշվեքննիչ պալատի ներգրավում, ԱՃԹՆ-ի իրականացման գործընթացի վերաբերյալ ԱԺ ներկայացուցիչների իրազեկում, վավերացման հաշվետվությամբ և ԱՃԹՆ-ի զեկույցով ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափի մշակում, պետական մարմինների կողմից սահմանված ձևաչափով տեղեկատվության ներկայացում)	կարծիքներ, վերլուծություն, վավերացման հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների իրականացման առաջընթացի մասին եռամսյակային տեղեկատվության ձևաչափ, իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ		պետական մարմիններ, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, անկախ ադմինիստրատոր	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. **ԲՇԽ-ի նիստերի անցկացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Նիստեր չեն անցկացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Նիստեր չանցկացնելու պատճառն է COVID-19 համավարակով պայմանավորված սեպտեմբերի 11-ից սահմանված կարանտինը, ինչպես նաև

				ռազմական գործողություն ներով պայմանավորված սեպտեմբերի 27-ից սահմանված ռազմական դրությունը:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. **ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Աշխատանքային խմբերի հանդիպումներ չեն անցկացվել	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Տես Միջոցառում 25-ի նշումները
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 29. **ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 31. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2019**թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողական Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	ԲՇԽ-ի կողմից հաստատումը իրականացվել է չորրորդ եռամսյակում:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 32. **Հայաստանի ԱՃԹՆ-ի** 2020**թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. լրամշակված աշխատանքային ծրագիր	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	ԲՇԽ-ի կողմից հաստատումը իրականացվել է չորրորդ եռամսյակում:

	Վերջնաժամկետը՝ Երկրորդ եռամսյակ			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 33. **ԱՃԹՆ-ի** 2021-2022**թթ. աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում**	*Արդյունքները՝* *ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագիր* *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	Նախատեսվում է իրականացնել 2021թ. 1-ին եռամսյակում:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34. **Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. **Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 37. **ՀՀ ԱՃԹՆ-ի** 2019 **տարեկան հաշվետության կազմում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետություն *Վերջնաժամկետը՝* Երկրորդ եռամսյակ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	ԲՇԽ-ի կողմից հաստատումը իրականացվել է չորրորդ եռամսյակում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. **ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Եռամսյակային հաշվետվություններ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. **Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր, միջազգային աշխատանքային խմբերի առցանց հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 40. **ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ Երրորդ եռամսյակ	Չի իրականացվել		Չի վճարվել՝ համաձայն ԲՇԽ-ի որոշման
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. **Թարգմանչական աշխատանքներ**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ Ընթացիկ	Ընթացիկ		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 24. 2. ԱՃԹՆ-ի իրականացման ամրապնդմանն ուղղված առաջարկվող գործողությունների իրականացում 2020 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Բնապահպանական ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը հաստատելու				

մասին» N 10-Ն հրամանը[8], որի նպատակն է բնապահպանական ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների՝ սահմանված ձևաչափով կազմումը և հրապարակումը: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվետվությունների հրապարակումը էապես կմեծացնի բնապահպանական հարկից գոյացած միջոցներով համայնքներում բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման թափանցիկությունն ու իրականացնող մարմինների հաշվետվողականությունը:

Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել, սակայն 2020թ. դեկտեմբերի 7-ին ԲՇԽ-ն էլեկտրոնային եղանակով հաստատել է Հայաստանի ԱՃԹՆ-ի իրականացման 2019 թվականի տարեկան հաշվետվությունը, որում ներառված է ՀՀ ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականը, ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019թ. 4-րդ եռամսյակի, 2020թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվետվությունները և 2020 թվականի օգոստոսին վերանայված աշխատանքային ծրագիրը:

Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբերի հանդիպումներ չեն կայացել:

Միջոցառում 29. ԱՃԹՆ խորհրդի նիստերին և կոնֆերանսների մասնակցություն

Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջազգային և տեղական առցանց միջոցառումների և քննարկումների, մասնավորապես.

- 2020թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած ԱՃԹՆ-ի խորհրդի միջազգային նիստին նախորդող ԱՃԹՆ-ի Արևելյան Եվրոպայի և Ասիայի երկրների քարտուղարությունների ազգային համակարգողների հանդիպմանը: Հանդիպմանը Հայաստանի ԱՃԹՆ քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց նաև Հայաստանի ԲՇԽ-ի հայտարարությունը՝ Հայաստանի և Արցախի նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների վերաբերյալ:
- Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները մասնակցել են Իրական սեփականատերերի առաջնորդության խմբի «Իրական սեփականատերերի թափանցիկության դերը ճգնաժամային պայմաններում» պանելային քննարկմանը[9], որտեղ ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը ներկայացրել է Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքների առաջընթացը:

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147356

[9] https://www.openownership.org/blogs/video-building-back-better-beneficial-ownership-transparency-during-a-crisis/

- 2020թ. նոյեմբերի 18-ին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված՝ COVID-19-ի ազդեցությունը ներառող ԱՃԹՆ-ի՝ արդյունավետ աշխատանքային ծրագրեր կազմելու ունակությունների զարգացմանը նվիրված սեմինարին[10]:
- 2020թ. դեկտեմբերի 7-11-ը ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից կազմակերպված «Պայմանագրերի թափանցիկության շաբաթին», մասնավորապես.
  - ✓ դեկտեմբերի 8-ին՝ «Պայմանագրերի բացահայտման համար օգտագործվող գործիքները» թեմայով ֆորումին[11], որտեղ, կազմակերպիչների հրավերով, ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ղեկավար Լուսինե Թովմասյանը ներկայացրեց Հայաստանի փորձը՝ քննարկվող հարցի վերաբերյալ,
  - ✓ դեկտեմբերի 9-ին «Փոփոխական ժամանակներում եկամուտների հավաքագրման ուժեղացում. ինչու է պայմանագրերի թափանցիկությունը կարևոր ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի համար» թեմայով վեբինարին[12],
- 2020թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի, Թրենսփերենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն, երկխոսություն, տեղեկատվական հարթակ և երիտասարդների ներգրավվածություն» ծրագրի կառուցվածքի և բովանդակության շուրջ քննարկմանը:

Միջոցառում 31. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում

Միջոցառում 32. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի լրամշակում և հաստատում

2020թ. դեկտեմբերի 7-ին ԲՇԽ-ն էլեկտրոնային եղանակով հաստատել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. աշխատանքային ծրագրի կատարողականը և Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. օգոստոսին վերանայված աշխատանքային ծրագիրը հաստատումը ԲՇԽ-ի կողմից իրականացվել է: Հաստատված փաստաթղթերը հասանելի են ԱՃԹՆ կայքում[13]:

Միջոցառում 33.
ԱՃԹՆ-ի 2021-2022թթ. աշխատանքային ծրագրի մշակում և հաստատում

[10] https://eiti.org/event/eiti-asia-workshopformulating-effective-work-plans-measuring-results-in-covid19-0
[11] https://eiti.org/event/forum-harnessing-tools-for-contract-disclosure
[12] https://eiti.org/event/strengthening-revenue-collection-in-uncertain-times-why-contract-transparency-matters-for
[13] https://www.eiti.am/hy/%D4%B1%D5%83%D4%B9%D5%86-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80

Միջոցառման կատարումը հետաձգվել է 2021թ. առաջին եռամսյակ: Հետաձգման պատճառներից է եղել նաև հետպատերազմյան և հետկարանտինային իրավիճակների հետևանքով առաջացած նոր իրողությունները ըմբռնելու անհրաժեշտությունը, միջազգային գործընկեր կազմակերպությունների, մասնավորապես Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի ԱՃԹՆ-ին առաջիկա տարիների համար դրամաշնորհի տրամադրման ուղղությունները համաձայնեցնելը և ըստ դրա՝ համարժեք աշխատանքային ծրագրի ձևավորումը:

Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Համաշխարհային բանկի ներկայացուցչի հետ՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումներն ավարտելու նպատակով ընթացիկ դրամաշնորհային ծրագրի ժամկետի երկարաձգման հարցի շուրջ: Հանդիպումները ներառել են նաև բանակցություններ՝ ԱՃԹՆ-ի ներդրման Հայաստանի գրանցած ձեռքբերումները պահպանելու և Հայաստանի ԱՃԹՆ-ի հետագա գործընթացին աջակցելու համար ՀԲ-ի նոր դրամաշնորհ տրամադրելու հնարավորությունների վերաբերյալ:

2020թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը դիմել է Համաշխարհային բանկ՝ «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի փակման ժամկետը մինչև 2021թ. հուլիսի 31-ը երկարաձգելու առաջարկությամբ:

Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք

ՀՀ ԱՃԹՆ-ի 2020թ. աշխատանքային ծրագրի հաշվետու ժամանակահատվածի միջոցառումներն ու աշխատանքերը իրականացվել են՝ համաձայնեցնելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ու Համաշխահային բանկի հետ՝ որպես դոնոր կազմակերպություն: Հայաստանում COVID-19-ի համաճարակով պայմանավորված արտակարգ դրության ռեժիմի պայմաններում բոլոր շահառուների, գործընկերների, ԲՇԽ-ի անդամների, աշխատանքային խմբերի անդամների հետ հանդիպումները կազմակերպվել են առցանց՝ ապահովելով ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներ ու համագործակցություն:
Կազմվել և ԲՇԽ-ի քննարկմանն է ներկայացվել ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.5-րդ՝ իրական սեփականատերերի բացահայտման պահանջի բավարարման մասով ԲՇԽ-ի ինքնագնահատականի հարցաթերթը: Դեկտեմբերի 29-ին ԲՇԽ-ի կողմից հաստատված հարցաթերթը ներկայացվել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ԱՃԹՆ-ի ստանդարտի 2.5-րդ պահանջի վավերացման պատասխանատուներին:

Միջոցառում 37. ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետության կազմում և հաստատում
Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության կողմից կազմված ՀՀ ԱՃԹՆ-ի 2019 տարեկան հաշվետության, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2019թ. 4-րդ եռամսյակի, 2020թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվետվությունների նախագծերը ԲՇԽ-ի կողմից էլեկտրոնային եղանակով հաստատվել են դեկտեմբերի 7-ին: Դրանք հասանելի են ԱՃԹՆ-ի հայաստանյան կայքում[14]:

Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ ԱՃԹՆ-ի անդամ երկրների հետ

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը շարունակել է համագործակցությունը միջազգային քարտուղարության հետ՝ Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման ընթացիկ հարցերի շուրջ: Մասնավորապես, պարզաբանվել են Հայաստանի 2018թ. ազգային զեկույցի ամփոփ տվյալների վերաբերյալ միջազգային քարտուղարության հարցադրումները, ԱՃԹՆ-ի իրական սեփականատերերին վերաբերվող ստանդարտը մեկնաբանելու հայաստանյան քարտուղարության հարցադրումները, քննարկվել են Հայաստանի ԲՇԽ-ի կողմից ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից առաջարկվող վավերացման նոր մոդելին անցնելու անհրաժեշտության առկայությունը, համաձայնություն է ձեռք բերվել միջազգային քարտուղարության կողմից կազմակերպվող թեմատիկ վեբինարին հայաստանյան քարտուղարության ներկայացուցչի կողմից երկրի համապատասխան փորձը ներկայացնելու վերաբերյալ և այլն:

2020թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ, ԲՇԽ-ի անդամ Լիլյա Շուշանյանը Արցախի և Հայաստանի Հանրապետության խաղաղ բնակավայրերի վրա Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների համատեքստում նամակ[15] է հղել ԱՃԹՆ-ի միջազգային Խորհրդին, մասնավորապես, միջազգային Խորհրդում ներգրավված արդյունահանող և ներդրումային ընկերությունների ներկայացուցիչներին, որում առաջ է քաշվել Պատասխանատու ներդրումների սկզբունքը ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտի որդեգրած սկզբունքների ցանկում ներառելու անհրաժեշտությունը:

Միջոցառում 40. ԱՃԹՆ-ի անդամավճարի վճարում

Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը հոկտեմբերի 28-ին էլեկտրոնային եղանակով հաստատեց իր որոշումը ԱՃԹՆ-ի տարեկան անդամավճարը չվճարելու վերաբերյալ: Նման որոշման համար հիմք է հանդիսացել Հայաստանում ռազմական դրության հետևանքով առաջացած անհետաձգելի լուծումներ պահանջող բազմաթիվ խնդիրների առկայությունը և բյուջետային առաջնահերթությունները: ԲՇԽ-ն գտել է, որ պետության կողմից վճարվող տարեկան անդամավճարի գումարը՝ 5,000 հազ. ՀՀ դրամի չափով ավելի նպատակահարմար է ուղղել այլ՝ առավել անհրաժեշտ ծրագրերի ֆինանսավորմանը: Այդ մասին ԱՃԹՆ-ի

[14] https://bit.ly/3aOxxJ0

[15] https://bit.ly/380mgDZ
https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2020/10/02/eiti-msg-of-armenia-strongly-condemns-aggression-of-azerbaijan-arm/100/

միջազգային քարտուղարությունը պատշաճ կերպով տեղեկացվել է:

ՆՊԱՏԱԿԸ	ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ զեկույցի կազմում			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. 1 **ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր, ԲՇԽ-ի նիստ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ	
	Արդյունքը՝ Տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը՝* Չորրորդ եռամսյակ, 2019թ. - երրորդ եռամսյակ, 2020թ.	Իրականացվել է	Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 43. 1. ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեխանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը կազմել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին և երկրորդ զեկույցներում բացահայտված, ինչպես նաև ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ քննարկումների արդյունքում արձանագրված մետաղական հանքարդյունաբերության ոլորտի իրավական և ընթացակարգային բացերի վերացման աշխատանքների ճանապարհային քարտեզի նախագիծը: Ճանապարհային քարտեզի նախագիծը ԲՇԽ-ի քննարկմանը կներկայացվի 2021թ. առաջին եռամսյակում:

Նաև տե՛ս Միջոցառումներ, 21, 24.2:

Միջոցառում 49. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության մշակում
Միջոցառում 51. Նախնական ուսումնասիրությամբ Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանում և առաջարկությունների ներկայացում
Միջոցառում 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված քննարկումների շահագրգիռ կողմերի հետ (ընկերություններ, պետական մարմինների ներկայացուցիչներ, այլ մասնակիցներ)
Միջոցառում 53 Ուսումնասիրության և իրավական ակտերի հաստատում ԲՇԽ-ի կողմից

2020թ. նոյեմբերի 9-ին ՀՀ վարչապետի աշխատակազմը պայմանագիր է կնքել Հայաստանի ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցի և նախնական ուսումնասիրության խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի հաղթող Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերության հետ: Գրանթ Թորնթոն աուդիտորական ընկերության ԱՃԹՆ-ի զեկույցի և նախնական ուսումնասիրության կազմման համար պատասխանատու թիմը նոյեմբերի 23-ին հանդիպում է ունեցել Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ, որի ժամանակ քննարկվել են ԱՃԹՆ-ի զեկույցի և նախնական ուսումնասիրության շրջանակը, դրա վերաբերյալ ԲՇԽ-ի կայացրած որոշումները, ԱՃԹՆ-ի քարտուղարությունը պարզաբանել է ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները, դրանց բավարարման ուղղությամբ անկախ աուդիտորից ակնկալվող աշխատանքների շրջանակը, համաձայնեցվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

Դեկտեմբերի 28-ին կայացել է Գրանթ Թորնթոն ընկերության, ԲՇԽ-ի անդամների, լիազոր մարմինների և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ներկայացուցիչների մասնակցությամբ առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել են Զեկույցի մեկնարկային հաշվետվությունը, զեկույցում և նախնական ուսումնասիրության մեջ ներառվող տվյալների հավաքագրմանը և ԱՃԹՆ-ի պահանջների պատշաճ մեկնաբանությանը վերաբերող մի շարք հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում Գրանթ Թորնթոն ընկերությունը ներկայացրել է 2019թ. ԱՃԹՆ-ի զեկույցի մեկնարկային հաշվետվությունը, որը համարվել է ընդունելի: ԱՃԹՆ-ի 2019թ. հաշվետու տարվա զեկույցը և նախնական ուսումնասիրությունը նախատեսվում է հրապարակել 2021թ. 1-ին կիսամյակում:

ՆՊԱՏԱԿԸ	**Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 54.	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում	*Արդյունքները՝* Ճանապարհային քարտեզի միջոցառումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, համապատասխան նախարարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. **Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ**	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հանդիպումներ, առաջարկություններ, իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56 **Հանքարդյունաբերության ռազմավարության մշակմանը մասնակցություն**	*Արդյունքները՝* *ԲՇԽ-ի աշխատանքային խմբի հանդիպումներ, առաջարկություններ, կարծիքներ* *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 57 **Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման Ճանապարհային քարտեզի լրամշակում**	*Արդյունքները՝* *Լրամշակված ճանապարհային քարտեզ* *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Չի իրականացվել	աշխատանքային խումբ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 60 **Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով** (toolkit), **տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում**	*Արդյունքները՝ ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ի գործիքակազմով քարտեզագրում, ճանապարհային քարտեզ/գործողությունների ծրագիր* *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 61 **Տվյալների համակարգված բացահայտման աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, տվյալների համակարգված բացահայտման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի իրականացում, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն**	*Արդյունքները՝ աշխատանքային խմբի հանդիպումներ, ճանապարհային քարտեզի/գործողությունների ծրագրի միջոցառումներ* *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ քարտուղարություն, ԲՇԽ-ի ընդլայնված աշխատանքային պումբ, պետական մարմիններ	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 54. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության Ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում				

Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, առաջարկությունների ներկայացում, օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ

Միջոցառում 56. Հանքարդյունաբերության ռազմավարության մշակմանը մասնակցություն

Միջոցառում 57. Պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի լրամշակում

Հաշվետու ժամանակահատվածում Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ չեն կայացել:

ՏԿԵՆ-ի կողմից ընթանում են Հանքարդյունաբերության ռազմավարության մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքները: Նախատեսվում է տեխնիկական առաջադրանքը ներկայացնել ԲՇԽ-ի կարծիքին 2021թ. 1-ին եռամսյակում:

Միջոցառում 60. Բաց տվյալների սկզբունքին համապատասխանող տվյալների համակարգված բացահայտման իրագործելիության ուսումնասիրություն, տվյալների համակարգային բացահայտման քարտեզագրում ԱՃԹՆ-ի գործիքակազմով (toolkit), տվյալների հրապարակման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի մշակում և հաստատում

Միջոցառում 61. Տվյալների համակարգված բացահայտման աշխատանքային խմբի հանդիպումների անցկացում, տվյալների համակարգված բացահայտման գործընթացի ինստիտուցիոնալիզացման ճանապարհային քարտեզի իրականացում, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի ԱՃԹՆ-ի պատասխանատուի հետ քննարկվել է առաջիկա տարիներին ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների շրջանակում հանքարդյունաբերության տվյալների համակարգված բացահայտմներ իրականացնելու համակարգի ստեղծման աշխատանքների իրականացմանը Համաշխարհային Բանկի աջակցության հնարավորությունները և շրջանակը, նախանշվել են 2021-2023թթ. իրականացվելիք միջոցառումները:

Հավելված 1

2020 **թվականի չորրորդ եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները**[16]

1. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում

1. 1 Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է գործողություններ հետևյալ թեմաների շուրջ.

Երկխոսություն քաղաքականության շուրջ

- Կազմակերպվել է երկու աշխատանքային հանդիպում շահագրգիռ կողմերի հետ (14 մասնակից) հանքարդյունաբերության քաղաքականության երկխոսության խթանմանն ուղղված նպատակների, թեմաների և արդյունքների քննարկման և հստակեցման նպատակով: Դեկտեմբերի 10-ին և 12-ին կայացած հանդիպումների արդյունքնում քաղաքականության համառոտագրերի մշակման համար ընտրվեցին մի շարք թեմաներ, այդ թվում՝ արժանապատիվ աշխատանքային պայմաններ, առողջ և անվտանգ միջավայրի ապահովում ազդակիր համայնքներում, թափոնների արդյունավետ կառավարում և այլն:

Հանքարդյունաբերական տեղեկատվական պորտալ

- Կազմակերպվել է երկու աշխատանքային հանդիպում շահագրգիռ կողմերի հետ (36 մասնակից) հանքարդյունաբերական տեղեկատվական պորտալի կառուցվածքի և բովանդակության քննարկման նպատակով: Դեկտեմբերի 9-ին կայացած հեռավար հանդիպումների արդյունքում մշակվեց պորտալի կոնցեպտը և քարտեզը: Նույն նպատակով հանդիպումներ են կազմակերպվել նաև ԱՃԹՆ քարտուղարության և ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև պորտալի բովանդակության մշակման համար հարցումներ են

[16] Տեղեկատվությունը տրամադրվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից

ուղարկվել համապատասխան նախարարություններին և տեսչական մարմիններին:

Երիտասարդության ներգրավում

- Մշակվել է հանքարդյունաբերության մոնիտորինգի իրականացման համար ստուգաթերթի նախնական տարբերակը հետևյալ բաժինների ներառմամբ՝ ա) բնապահպանական ազդեցության գնահատում բ) սոցիալական ազդեցության գնահատում գ) առողջության և անվտանգության գնահատում:

1. 2 «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է «Մեգո Գոլդ» ընկերության ընդերքօգտագործման պայմանագրով ամրագրված պարտավորությունները և դրանց չկատարման հնարավոր պատճառները և պատասխանատվությունը, ինչպես նաև մշակվել է «Մարջան մայնինգ», «Ֆորչուն ռեզորսիս», «Պարամաունտ գոլդ» ընկերությունների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները , որոնք չեն հրապարակվել՝ պայմանավորված պատերազմական շրջանում այդ տեղեկատվության հրապարակման անպատեհությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում www.ecolur.org կայքում հրապարակվել են Ասսաթ[17], Մոլիբդենի աշխարհ[18] ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունները:

1. 3 «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում նախատեսվող 6 հետաքննական նյութերը մշակումը նախնական, հետազոտական փուլում է:

1. 4 «Հետաքննող լրագրողներ» ՀԿ -ն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի կողմից ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում շարունակել է հանքարդյունաբերության ոլորտին նվիրված հետաքննական հոդվածների շարքը: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպության կողմից մշակվել և հրապարակվել է 1 հետաքննական հոդված[19], որը նպատակ ունի խթանելու

[17] https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/Qaraberdreportfinalnew1.pdf
[18] https://www.ecolur.org/files/uploads/2020/Transparency%20Project%202020/dastakertreportfinalcopy2.pdf
[19] https://hetq.am/hy/article/125313

հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունը և իրական սեփականատերերի բացահայտումը:

2. Հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում

2.1 «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից տրամադրված նոր դրամաշնորհային ծրագրի շրջանակում (01.05.2020-30.04.2021), դեկտեմբերի 4-ին իրականացրել է իրազեկման հանդիպում Արագածոտնի մարզի Մելիքգյուղ ազդակիր համայնքում, որտեղ հանդիպումներ են տեղի ունեցել տեղացի բնակիչների, ՏԻՄ ներկայացուցիչների հետ, որոնք տեղեկացել են իրենց համայնքում գործող «Մեգո Գոլդ» ընկերության, դրա կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների, ինչպես նաև ԱՃԹՆ ստանդարտների, ընթացակարգերի և օրենսդրական դաշտի վերաբերյալ: Ի լրումն՝ նախապես մշակված հարցաթերթիկների հիման վրա անցկացվել են հարցազրույցներ ՏԻՄ-երում և բնակչության, քաղաքացիական հասարակության շրջանում պարզելու ընդերքօգտագործողների գործունեության հետևանքները տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական, բնապահպանական վիճակի վրա, ինչպես նաև դրանցում ներառված համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ: Այցի ժամանակ համայնքապետարանին տրամադրվել է նաև «ԱՃԹՆ-ի ստանդարտ 2019 թվական» հրապարակումը: